

---

---

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՎ  
ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի 1878-ի փետրվարի 19-ի պայմանագիրը հայ ժողովուրդին ընդունեց մեծ խանդավառությամբ: Նշանավոր այդ իրողությունները նոր հովեր մտցրին ընթացիկ կյանքի մեջ և խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների համար: Մի պահ թվում էր, թե Օսմանյան կայսրության ճիրաններում խոշտանգվող Արևմտյան Հայաստանին փոխարինելու էր գալիս ազատ, իրական Հայաստանը: Վերջապես իրականանում էր այն, ինչի համար հայ ազատագրական միտքը երազել էր երկար ժամանակ:

Ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչները տակավին չէին նշարում թուրքական կառավարողների ապագա ծրագրերն ու Օսմանյան կայսրությունում տնտեսական ու քաղաքական ռազմավարական շահեր հետամտող եվրոպական տերությունների խարդավանքների ու իրենց ակնկալությունների անանց անդունդը:

XIX դ. 70–80-ական թվականներին Կ. Պոլսի եկեղեցական և աղայական վերնախավը Հայկական հարցի լուծումը գերազանցապես տեսնում էր Բեռլինի կոնգրես ներկայացված պատրիարք Ն. Վարժապետյանի ծրագրի իրագործման ջրջանակներում, որը հանգում էր օսմանյան գահի հովանու ներքո ինքնավար Տաճկահայաստան ստեղծելուն, որի կառավարման համար թուրքական կառավարությունը պետք է նշանակեր մեծ տերությունների կողմից հաստատված գեներալ-նահանգապետ:

Սուլթանի գիտությամբ կազմված և նրա թույլատվությամբ նախ Սան-Ստեֆանո և ապա՝ Բեռլին ուղարկված այդ ծրագիրը, հետագայում Գր. Չոհրաբի արտահայտությամբ՝ «տեսակ մը պատնեշ պետություն» էր, որ ռուսների առաջխաղացումը կանխելու համար 1877 թ. նոյեմբերին սուլթանն առաջարկեց հայ բարձրաստիճան հոգևորականներին, որպեսզի նրանք «հայ բնակչության նահանգներուն համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն օսմանյան գերիշխանության տակ»<sup>1</sup>:

Հայտնի է, սակայն, որ այդ խոստումը թուրքի խոստում էլ մնաց: Հենց որ բրիտանական նավերը մտան Կ. Պոլսի ջրերը և սուլթանի երկյուղն անցավ, նա առանց հապաղելու հրաժարվեց Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու գաղափարից: Հիասթափված մեծ տերությունների դիվանագիտական խարկանքներից և սուլթանական կառավարության հայահալած քաղաքականություն-

---

<sup>1</sup> Գր. Չոհրաբի պ. Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ. Պեյրութ, 1976, էջ 7:

նից, Մկրտիչ Խրիսյանն անցավ Հայկական հարցը զենքի ուժով լուծելու, զինված պայքարի քարոզչությանը: Իրադարձությունները, սակայն, փոխեցին նրա համոզմունքները: Մեծ հայրենասերը ետ կանգնեց «երկաթե շերեփի» կամ զենքի քարոզչությունից և նորից բռնեց թղթե խնդրագրերի, գանգատների ու դիմումների անհուսալի ուղին: Հետագայում, Էջմիածնի կաթողիկոսական արքեպիսկոպոսիտի Բագմելուց հետո, ծերունի հայրապետը սկսեց դատապարտել հայերի բոլոր կարգի ըմբոստության կոչող ծրագրերը, անգամ մասնակի ելույթների մեջ առիթ տեսնելով նոր կոտորածների: Ամենուրեք և ամենքին հորդորելով խաղաղ, շինարարական ստեղծագործ աշխատանքի, նա ընդմիջտ գոցված համարեց Հայկական հարցի լուծման ապստամբական ճանապարհը՝ միակ հուսալի լծակը տեսնելով մեծ տերությունների միջամտության մեջ: Ամենայն հայոց կաթողիկոսի ուղեգծից շեղ չէր նաև Կ. Պոլսի պատրիարքների քաղաքական ընթացքը: Ն. Վարժապետյանին 1885 թ. փոխարինած ծայրահեղ պահպանողական Հարություն պատրիարքը, օրինակ, քարոզում էր, որ «Եվրոպայի քաղաքականության այս խառնակ վիճակին մեջ լավ կլինի հաշտ երթալ տաճկաց հետ, որպեսզի Թուրքահայաստանի հայք ենթակա չլինեն նորանոր տառապանաց և հալածանաց»<sup>2</sup>:

Հայկական հարցի լուծման որոնումներում նույն տեսակետն էր պաշտպանում Ամենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական ամսագիր «Արարատը», Կ. Պոլսի պատրիարքության «Մասիս» և «Արևելք» թերթերը: Սրանք պաշտպանում էին այն կարծիքը, որ արևմտահայ ազատագրական ելույթները վնասակար են և կործանարար, իսկ Բեռլինի կոնգրեսի որոշումները՝ «ունայն խոսքեր կամ պատիք ցույցեր չեն կրնար ըլլալ, հետևաբար իրավունք ունենք հուսալու, թե Հայաստանի ներկա դժնդակ վիճակը վերջ գտնելու անհրաժեշտ հարկին մեջ է, և անդորրության քաղցրավարթ արշալույսը ծագելու մոտ է մեր բազմաչարչար հայրենյաց հորիզոնին վրա»<sup>3</sup>: Բնորոշ է, որ 1885 թ., առանց որևէ խոտորման, «Մասիսին» յոթամյա հեռավորությունից ձայնակցում էր «Արևելքը», գրելով, որ ինքը «պիտի նպաստե տերության և ազգին միջև լավագույն հասկացողության և կատարելագույն վստահության մը գոյացման, հաստատ բռնելով միշտ այն սկզբունքը, թե տերության և ազգին շահերն անքակտելի կերպով կապակցյալ են»<sup>4</sup>:

Ազատագրական պայքարի ճանապարհով Հայկական հարցի լուծման նկատմամբ խիստ բացասական դիրքորոշում ունեին արևմտահայ վերնախավի բոլոր այն ներկայացուցիչները, որոնք մեծ տերությունների միջամտությամբ Օսմանյան կայսրության սահմաններում ազգային ինքնավարության ստեղծմանն էին հետամուտ: Մեծ տերությունների դիվանագիտական ձեռնարկների հետ լծորդելով իրենց ծրագրերի իրագործումը, նրանք քարոզում էին ամեն կարգի ապստամբական շարժումներից ու քաղաքական պայքարից հեռու մնալու կարգախոսը:

<sup>2</sup> Ա. Հ ա մ բ ա ղ ա ն. Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. Երևան, 1990, էջ 10:

<sup>3</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1878, հուլիսի 11, -2148:

<sup>4</sup> «Արևելք», Կ. Պոլիս, 1885, հունվարի 14, - 301:

Բեռլինի կոնգրեսի ընթացքում և կոնգրեսին հաջորդած առաջին շաբաթներին քաղկանյան ժողովուրդների օրինակը ոգևորում և նոր եռանդ էր ներարկում, այսպես կոչված, պոլսահայ սահմանադրականներին՝ Գ. Օտյանին, Ռուսինյանին, Սերվիչենին, Ադաթունին և մյուսներին: Նրանցից ոմանք ավելի իրական էին պատկերացնում եվրոպական դիվանագիտական աջակցությամբ ձեռք բերելու բաղձալի ինքնավարությունը: Ուշագրավ է Գր. Օտյանի 1880 թ. գրած «Տեսարակի» հետևյալ տողերը. «Թուրք կառավարությունը երդում ըրած է ջնջել հայերը և եթե այս բանս ի գլուխ չէ ելած, թերևս Ռուսիոյ շնորհիվ, որուն վերջին հաղթությունները այդ բնաջնջման գործիք եղեղ քրդերուն հոգվույն մեջ թողացած են փրկարար երկյուղ մը, որ զայնս եթե ոչ ավելի բարեխիղճ գեթ ավելի շրջահայաց կրնէ: Առ այժմ՝ մաս առ մաս հառաջ կտանին այս ոչնչացման գործը թուրք իշխանությանց աչքին առջև: Թուրք կառավարությունը պատասխանատու է Հայաստանի մեջ տիրող վիճակին: Ոչ որ կտարակուսի այս մասին.....»<sup>5</sup>: Այս հավատով էր Գր. Օտյանը գործուն մասնակցություն ունեցել հայ պատվիրակության կողմից Բեռլին ներկայացրած նախագծի ստեղծմանն ու խմբագրմանը: Այդ պահին Գր. Օտյանն ու նրա համախոհները հակված էին կարծելու, թե Թուրքիան շահ չունի, որ հայերը «գոհ ըլլան վերջապես իրենց վիճակէն, որովհետև չկրնար կարծել, որ այսօրվա պէս հալածված ու թշնամացված ըլլալով, հավատարիմ կմնան իրեն»: Եվ, ահա, այս ամենը հաշվի առնելով, Թուրքիային պաշտպանող «Եվրոպան իրոք կփափագի արգելել ռուսական իշխանության ծավալումն ի Փոքր Ասիա, պարտավոր է իրավունք տալ հայոց արդար բաղձանքներուն, որովհետև եթե այդ գոհունակությունը զլացվի իրենց, Ռուսիո գիրկը պիտի նետվի»<sup>6</sup>: Գր. Օտյանը պնդում էր, որ «Եթե Սերբիո և Ռումինիո շատ տարիներ վայելած չըլլային մասնավոր ինքնավարություն մը՝ պատրաստված ըլլայի՞ն Եվրոպայի ձեռքէն ընդունելու իրենց անկախությունն, և տերությունը իսկ պիտի կրնայի՞ն բուլղարներուն շնորհել իրենց ինքնօրինությունը: Ըստ այսմ, ո՞վ կրնա ըսել, թե նույն կացություն չպիտի ներկայանա յԱսիոյ»<sup>7</sup>: Մինչդեռ Կ. Պոլսի ամիրաների, սառաֆների և պատրիարքարանի դաշինքը կանգնած էր արևմտահայության ճակատագրի լուծման խաղաղ ուղու վրա, գավառների իսկական կացությանը լավատեղյակ հայրենասերներին տեսանելի էին, որ և՛ ազգային սահմանադրությունը, և՛ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը ի վիճակի չէին ապահովելու հայի պատիվը, անձն ու գույքը, որ դրանք իրենց էությամբ կոչված էին լոկ «ազատության» երաշխիքներ տալու սուլթանական իշխանությունների կողմից սանձազերծվող հակահայկական գործողությունների պայմաններում: Արևմտահայ առաջադեմ մտավորականները, գավառահայ բուրժուազիան և բնակչության մյուս խավերը, որոնք ամենատարբեր ձևերով տուժում էին թուրքական բռնություններից, կողմնորոշվում էին դեպի պայքար և դեպի Ռուսաստան<sup>8</sup>:

<sup>5</sup> «Հայաստան», Լոնդոն, 1891, - 15:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս Մ ա թ ո լ ի ս ա ն. Ազգային խնդիրն ու սահմանադրությունը Թուրքիայում. Թիֆլիս, 1912, էջ 145:

Ռուսական տիրապետության և Ռուսաստանի արևելյան քաղաքականության դրական կողմն արձանագրող XIX դ. 70–80-ական թվականների արևմտահայ առաջադեմ բոլոր մտածողները չէին անտեսում անձի ու գույքի ապահովությունը, մեծարում էին լուսավորությունն ու քաղաքակրթությունը, քարոզում և գոյության իրավունքի կռիվն պարզում այն ամենը, ինչը հնարավոր էր ցարիզմի տիրապետության պայմաններում: Արևմտահայ նշանավոր հրապարակախոս Արփ. Արփիարյանն իր «Ռաֆֆին և հայ վիպասանությունը» հոդվածաշարում մեծ համակրանքով էր խոսում Ռուսաստանի առաջադիմական դերի մասին և նշավակում ցարիզմի խավարամոլ քաղաքականության շրջափուլային դրսևորումները: «Ռուսիոյ հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա, և ժողովուրդը կարտասանե նոցա անուններն ակնածությամբ և համակրանք: Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է այս զգացմանց և զաղափարաց տարածմանն ի Հայս,– գրել է Արփ. Արփիարյանը:–Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող անձնավորությունք վայելում են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա: Ռուս ազգը մին է ի նոցանե, որը ինչքան ալ թերությանց ենթակա լինին, բայց և այնպես հայրենյաց սերը իրենց առաքինությանց գլխավորն է»<sup>9</sup>:

Մա ժողովրդավարական Ռուսաստանն է, որին արևմտահայ գրողը հակադրում է հակոտնյան՝ ցարականը: «Ռուսական կառավարությունը,– իր տեսակետն ամբողջացնում է գրողը,– որ Ասիո մեջ քաղաքակրթության տարածման ամենագոր միջոցը կհռչակե ինքզինք... հանդարտ ու հավատարիմ ժողովուրդեն կը սարսափի՝ որ նորա մամուլը այսքան չարաչար կը կաշկանդե: Մակայն չհուսահատինք քաղաքակրթության հաղթանակեն: Մտաց արտահայտություններն ատեն մը ուրիշ կարմիր գույնով կը ներկին. այժմ արյան տեղ հաջորդած կարմիր թանաքն ալ անհետ կը լինի: Բայց մինչև որ անհետ լինի, իցե թե Ռուսիո կառավարությունը փոխանակ խավարամիտ Կատրոպներու, ունկն դներ մարդկության ճշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներն են»<sup>10</sup>:

Արփ. Արփիարյանի համար Արևելյան Հայաստանում Հայկական հարց չկար, քանզի այն օրից, երբ Ռուսաստանը տիրել է Արարատյան նահանգին, հայերի համար «նոր թվական մը բացվեցավ: Բարեկարգող վարչություն մը հաջորդելով նախորդ դրության, հայերը այլևս հանգիստ պիտի ապրեին: Նոր կյանքը բարեհաջող սկզբնավորությամբ կը բարգավաճեր: Նյութականին ապահովությունը հայոց ամեն դյուրություն կը հայթայթեր մտավորականին զարգացմանը համար»<sup>11</sup>: Արփ. Արփիարյանը համերաշխ էր Րաֆֆու այն տեսակետի հետ, թե որպես ազատագրական պայքարի մարտավարություն պետք է շարժման հիմքում դնել ուժերի համախմբման, ներքին ու միջազգային պայմանների հաշվառման և տևական նախապատրաստության ծրագիրը: Արփ. Արփիարյանը Րաֆֆու նման այն տեսակետն ուներ, որ արևմտահայությունը վերջին պատերազմը նախա-

<sup>9</sup> «Մասիս», 1884, -3737, էջ 215:

<sup>10</sup> «Մասիս», 1884, -3736, էջ 196:

<sup>11</sup> Ա թ փ. Ա թ փ ի ա թ յ ա ն. Երկեր. Երևան, 1987, էջ 407:

պատրաստված չդիմավորեց: Պատմական անցյալի կորցրած օղակը լավատեսությամբ ետ բերելու տրամադրությամբ այն կարծիքն էր հայտնում, որ եթե արևմտահայության կենսական ուժերը նախապատրաստված լինեին և երկրի ներսում նպատակալաց գործողություններ սկսեին, ինչպես կատարեցին բալկանյան սլավոնները, արևմտահայությունը Ռուսաստանի օգնությամբ կթոթափեր թուրքական լուծը: Ուստի, սխալներից պետք է դասեր առնել, վերլուծել կատարվածը, քննադատաբար գնահատել և վերագնահատել անհաջողության պատճառները՝ Հայկական հարցի լուծման ճանապարհը հարթելու համար:

Ժողովրդի և նրա գրականության պատմության մեջ, առհասարակ, լինում են շրջափուլեր, երբ ազգային հրատապ խնդիրների թելադրանքով պատմական հիշողությունը, տիրապես ներխուժելով արդիականություն, դառնում է սերունդների ինքնագիտակցության կարևորագույն լծակներից մեկը: Մեր գրականության համար այդպիսի շրջափուլ էր XIX դարի 70–80-ական թվականները: Հայ ժողովրդի գոյապայքարի առաջադրած պահանջների թելադրանքով և այդ պահանջների կենսագործմանն իր կյանքն ու ստեղծագործությունը նվիրեց Հ. Շիրմանյան-Մերենցը: Ըստ Գրականության մեջ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային գործության առաջին ժայթքումն էր, ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմի ընթացքում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կախարդական արտացոլումը, ապա կես դար անց, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմով հայ ժողովրդին համակած հայրենասիրական պոռթկումը կյանքի կոչեցին Մերենցի պատմավիպասանությունը և հրապարակախոսությունը: Մերենցի երիտասարդությունը համընկավ արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների գնահատման և զարթոնքի իրադարձություններին, հասարակական կյանքում ձևավորվող առաջադիմական և հետադիմական դիրքորոշումների և խմբակցությունների պայքարի ժամանակաշրջանին: Նա ներգրավվում է առաջադեմ երիտասարդության ծավալած հասարակական գործունեության մեջ, անդամակցվում և գործուն մասնակցություն է ունենում 1846 թ. Մ. Պեշիկթաշյանի գլխավորությամբ հիմնադրված համազգայց ընկերության աշխատանքներին: 1840-ական թվականների վերջերին, Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական բաժնում սովորելու տարիներին, Մերենցն ականատես է լինում ծայրահեղ հետադիմական ուժերի և Վատիկանի անսքող դաշնությանը: Ուսումնառությունից հետո վերադառնալով Կ. Պոլիս՝ նա բախվում է կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի հետ: Մերենցը դավանափոխության դեմ պայքարում էր ազգային ուժացման փտանգի գիտակցումով՝ աչքի առաջ ունենալով նաև Լեհաստանի հայության կորուստը: 50–60-ական թվականներին նա ազատագրական պայքարի հետևողական կողմնակից էր, անմիջական կապեր է ունեցել Ջեյթունի 1862 թ. ապստամբների հետ: Հետագայում նա նահանջ է կատարում պայքարի զինված ձևերից: Այս իրողությունն է հաստատում 1876 թ. հոկտեմբերին Գր. Արծրունու և Ըստ Գրականության մեջ նրա սուր բանավեճը, ուր նա այն համոզմունքն էր հայտնում, թե ինքը «վերեն» հեղափոխության կողմնակից է, որովհետև «վարեն» եկող հեղափոխությունները մեծ արյունահեղություն են պահան-

ջում: «Մենք կուզենք, – ասում էր Ծերենցը, – որ ամեն մի հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն: Վարեն եկած հեղափոխությունը (եթե որ հաջողին այ) անչափ աղետք՝ անչափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կը լինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շոայլ լինել. և ընդհակառակ, վերեն եկած հեղափոխությունը միշտ հաստատ են և երբեք այն արյանց գիներով չեն լիներ... Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդու ազատության տվավ գրեթե առանց արյուն թափելու, հրովարտակով մը միայն, հրովարտակ՝ որու բոլոր անցյալ և ապագա Ալեքսանդր անունը կրողներուն էն մեծը պիտի լինի նորա ստորագրողը հանդերձալ ողջամիտ դարերու մեջ»<sup>12</sup>: Այստեղ Ծերենցի հարցադրումները բխում էին հասարակության աստիճանական առաջընթացի մասին նրա հիմնական դավանանքից: 1878 թ., ստեղծված կացությունը հաշվի առնելով, հայ գործիչներից շատերը պահանջում էին իրենց տալ «Հայաստան ոչ թագապսակ, ոչ անկախ, ոչ ինքնուրույն, այլ Հայաստան մասն օսմանյան տերության՝ հարկատու ճիշտ ուրիշ գավառաց պես... ազատ ի հարստահարությանց, ավազակաց, մանավանդ ի կուսակալաց և բարի օրինակ լավ կառավարության նույն տերության դրացի գավառաց»<sup>13</sup>: Չափավոր, ազգային-պահպանողական Ծերենցն այդ պահին այն թյուր կարծիքն ուներ, թե «այս պետք է փափագեր նույն այն ինքը Բ. Դուռը, բայց դժբախտություն մըն է, որ կենտրոնացման հիվանդությունը, պաշտոնյա տիրաց ապականությունը... և կրոնամոլություն օրենք դարձած են ի Տաճկաստան»<sup>14</sup>: 1878 թ. դեկտեմբերին գրած «Ժամանակիս ոգին և հայ ապագան» հոդվածում Ծերենցը թեկուզ շարունակում է հույսը դնել հասարակության և մարդու բնական առաջադիմության և բարեհաջողության վրա, որի համաձայն իբր թե ժամանակի տիրապետող ոգին «արդարությունն» է, այնուամենայնիվ, սուր քննադատության է ենթարկում Բեռլինի կոնգրեսում Անգլիայի դիրքորոշումը: «Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է, – գրել է Ծերենցը, – ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը: Այո, այն օրվանե, որ Անգլիա Կիպրոսը օսմանյան տերութենեն առնելով յուր սեփականության ընելով, փոխարեն նրա Ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհք զինքը պատասխանատու կճանաչե թե լավ, թե վատ գործունեությանց»<sup>15</sup>:

Ավելորդ է ասել, որ Ծերենցը նկատի ուներ 1878 թ. Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն Օսմանյան կայսրությունից զավթելով Կիպրոսը, ծովերի «թագուհին» պարտավորվում էր ապահովել նրա ասիական տարածքների անձեռնմխելիությունը, Թուրքիայի ամբողջականությունը: Հիրավի, Բեռլինի կոնգրեսն ընթացավ այնպիսի թատերախաղով, որ Ծերեն-

<sup>12</sup> «Արևելյան մամուլ», Չմյուռնիա, 1876, հոկտեմբեր, էջ 349–350:

<sup>13</sup> «Փորձ», Թիֆլիս, 1878, - 1, էջ 207:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 208:

ցին իրավունք վերապահեցին առավել խիստ արտահայտվելու՝ «Անգլիա Օսմանյան պետության կամ յուր անձնական շահերուն միայն բարեկամն է»<sup>16</sup>:

Ծերենցը խորությամբ գիտակցում էր, որ Արևմուտքից Արևմտյան Հայաստանի ազատություն ստանալն առնվազն պատրանք է: Բեռլինի կոնգրեսից մեկ տարի էլ չէր անցել, երբ նա տազնապով զգաց ազգային բնաջնջման մոտալուտ և ահավոր այն վտանգը, որ օսմանյան կերպարանք ստացած դամոկլյան սրի նման կախվում էր արևմտահայության գլխին: Ծերենցը գիտեր, որ ձգտելով ամեն կերպ կանխել թուրքական պետության հետագա քայքայումը՝ կայսրության վերնախավը սկսել էր ծրագրեր մշակել արևմտահայության բնաջնջման համար:

«Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» պատմաքննական հոդվածում Ծերենցը մեջբերումներ էր կատարում սուլթան Աբդուլ Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշայի հեղինակած ծրագրից<sup>17</sup>, ուր պանթուրքիզմի գաղափարներով ու կարգախոսներով դեկավարվող «նոր օսմանները» սխալ և անօգուտ էին համարում կայսրության եվրոպական մասում ապրող քրիստոնյա ժողովուրդներին ժամանակին տրված արտոնությունները և կանխագծում ասիական քրիստոնյաների (հայերի) ոչնչացումը: «Եթե Եվրոպիո մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէր, որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ, – մտորել էր Քյամիլ փաշան:

... Խելոքությունը ջնջել վերացնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ ու գործիք լինել: Ուրեմն, – եզրակացնում էր Քյամիլ փաշան, – այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անձեռ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք – քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կը հրատարակենք և դուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան»<sup>18</sup>:

Թուրքական մարտնչող ազգայնականության նոր զարգացումները և արևմտահայ հատվածի համար նախապատրաստվող ողբերգության մոտեցող տազնապները շատ անմիջական ներգործություն ունեցան Ծերենցի գաղափարական շրջադարձային, արմատական վերակառուցման վրա: Արևմուտքի դիվանագիտական խաբկանքներից ու խարդավանքներից հոգնած և հիասթափված Ծերենցը հանգեց այն համոզման, որ ազատությունն անհնարին է առանց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, ընդդեմ թշնամու՝ նրա ներքին ուժերի ու ջանքերի համախմբման: Եթե առաջ, մասնավորապես իր հրապարակախոսության մեջ, նա ինչ-որ հույսեր էր կապում «վերեն» շնորհվող ազատության հնարավորությունների նկատմամբ, այսա ուշ շրջանի գեղարվեստական ստեղծագործություններում ցույց տվեց, որ ազատությունը երբեք չի շնորհվում, որ ժողովուրդն այն նվաճում է միայն զինված պայքարով: Անսպասե-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Քյամիլ փաշայի հայակործան այս ծրագիրը արևելահայ մամուլում առաջին անգամ հրապարակել է Ծերենցը («Փորձ», 1879, – 7–8):

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 204-205:

լի չէր, որ իր վեպերի համար («Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի») որպես հենք Ծերենցը վերցրեց պատմության այն շրջանները, երբ օտար զավթիչների դեմ ոտքի կանգնած հայ ժողովուրդը հանուն ազգային անկախության դրսևորում է իր ամենավսեմ հատկությունները՝ ազատասիրությունն ու հայրենասիրությունը: Ծերենցի առաջադիր նպատակն էր ժամանակակիցներին հասկացնել, որ անելանելի իրավիճակներ չկան, որ ազգը, անցյալի սերունդների փորձից ելնելով, չպետք է հաշտվի բռնակալության հետ: Վերոհիշյալ բանաձևման առումով խորհրդանշական է, որ, ելնելով Կիլիկյան Հայաստանի պատմության և արդիականության նկատմամբ տևական հետաքրքրությունից, Ծերենցը որպես դրոշակ պարզեց «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր պատմաբան և հրապարակախոս Մտ. Պալասանյանը, երբ Ծերենցի վեպին նվիրած իր գրախոսականում գրում էր, թե՛ «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնի» նման յուր ժամանակին գրված և հրապարակված լինի»<sup>19</sup>: Չմոռանանք, որ 1878–1881 թթ. հրապարակվեցին նաև մյուս վեպերը:

Հայկական հարցի լուծման ճանապարհին Ծերենցի վերջնական կարծիքը հանգում էր նրան, որ նախքան զենքի դիմելը անհրաժեշտ է զինել արևմտահայ անզեն բնակչությանը, նրան ընդունակ դարձնել զեթ ինքնապաշտպանության: Հ. Երամյանը իր «Հուշարձանի» Ա հատորում գրում է, որ Ծերենցի տեսակետին էին նաև Կարինում (Էրզրում) ռուսական փոխխյուսատոս Կ. Կամսարականը և Մ. Խրիմյանը, որոնք գտնում էին, որ նոր պայմաններում «մենք ուժ չունենք օսմանյան տերությանը հաղթելու»<sup>20</sup>:

Ընդհանրապես 1870–80-ական թվականների արևմտահայ հայրենասեր մտավորականությանը հուզող հիմնախնդիրները բացահայտվում էին ժողովրդի աշխատավորական գրեթե բոլոր խավերում խաչաձևող կողմնորոշումների պատկերը: Ռուս-թուրքական պատերազմի արդյունքներից հիասթափված զանգվածներին լավատեսական և ինքնավստահության ոգի ներարկելուն էր հետամուտ Արփ. Արփիարյանը, երբ թղթակցություններից մեկում գրում էր. «Ձեյթուն իրեն ինքնավարությունը ունեցավ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արյուն շատ ավելի արդյունավետ եղան, քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարությանց միջամտություններ... Հուսանք թե Ձեյթունցիք իրենց փրկությամբ Հայաստանի փրկությունը և ինքնավարությունը կդյուրացնեն»<sup>21</sup>: Չմոռանանք Մվաճյան-Թագվորյան խմբակցության գործիչներին, Պեշիկթաշլյանին, որոնք Արևմտյան Հայաստանի ազատագրության գործը չէին կապում եվրոպական տերությունների միջամտության հետ: Նրանց համոզմունքն այն էր, որ տերությունների միջամտությունը կարող էր միայն նոր կեղեքումների, ճնշումների ու ջարդերի ասպարեզ դարձնել երկիրը: Շրջադարձ կատարելով դեպի Ռուսաստան, բայց միաժամանակ հակադրվելով ցարիզմին՝ նրանք չէին կամենում ոչ մի պայ-

<sup>19</sup> Նույն տեղում, -2, էջ 195-196

<sup>20</sup> Տե՛ս Հ. Երամյանի. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա. Ալեքսանդրիա, 1929, էջ 23:

<sup>21</sup> «Մշակ», 1879, - 23:



մանով գործիք դառնալ Ռուսաստանի դեմ պայքարող եվրոպական դիվանագիտության ձեռքում<sup>22</sup>:

Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման, Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականության նկատմամբ հայ գործիչների բռնած դիրքը սուր ծաղրի է ենթարկել Հ. Պարոնյանը: Նա մերժել է Ն. Վարժապետյանի անհաջող փորձերը՝ սիրալիր ընդունելությունների միջոցով հաշտեցնելու միմյանց չհանդուրժող «աջակողմյան» և «ձախակողմյան» երեսփոխաններին: Պարոնյանը բացառիկ կրթոտությամբ հանդես գալով պատրիարքի՝ «օսմանյան հայրենիքը» պաշտպանող 1876 թ. շրջաբերականի դեմ, ցույց տվեց, որ արևմտահայության շահերի և «օսմանցիության» քարոզների միջև ոչ մի ընդհանրություն չկա և որ պատրիարքն անտեսում էր «այն եղենագործությունները, որոնցով հայոց ստացվածքն, կյանքն ու պատիվը բռնաբարված են և կրոնաբարվեն»: Հրապարակախոսը մեծ կարևորություն տվեց, այսպես կոչված՝ «կովկասյան խնդրույն» կեղծիքի՝ Ռուսաստանի դեմ արևելահայության կարծեցյալ ապստամբության մասին մամուլում տարածված ստահող լուրերի բացահայտմանը և այդ գործում պատրիարքարանի անտարբերությանը: Պատրիարքի դեմ Հ. Պարոնյանի գրած հակաթուրքական հոդվածի համար «Թատրոն» երգիծաթերթը երկու ամսով փակվեց: Իր խմբագրած «Թատրոնում» Պարոնյանը դասական խորության հասցրեց քաղաքական սատիրայի ժանրը, որի հնարավորությունները խմբագրի գրչի տակ առավել տպավորիչ դրսևորվեցին Թուրքիայի և եվրոպական տերությունների դիվանագիտական փոխհարաբերությունների՝ Հայկական հարցի հետ առնչվող իրավիճակները մերկացնող բնութագրումների մեջ: Արևելքի ժողովուրդների բախտը իր քաղաքական նպատակներին ծառայեցնող եվրոպական տերություններից Հ. Պարոնյանը հատկապես առանձնացնում էր Անգլիան, որն իր գաղութատիրական ձեռնարկները կատարում էր քրիստոնյաներին «փրկելու», նրանց «լուսավորելու» կեղծ կարգախոսներով:

Արևմտահայ մամուլի որոշ պարբերականներում տեղ գտած այն տեսակետը, որ եթե Անգլիայում հասարակական կարծիք ստեղծվի հայ ժողովրդի մասին, ապա այն թուրքական կառավարությանը կհարկադրի բարելավելու հայերի վիճակը, Հ. Պարոնյանն իրեն հատուկ հեզնանքով պատասխանում էր. «Անգլո հասարակական կարծիքն իմ հովանոցիս կը նմանի. որ դիեն որ շահ տեսնա, ան կողմը կդառնա»<sup>23</sup>: Ասել է թե՛ Անգլիայի դիվանագիտական շրջանակներում ստեղծված հասարակական կարծիքն առաջին հերթին արտահայտում է բրիտանական կառավարող վերնախավի շահը, որը կարող է ամեն օր ներգործել հասարակական կարծիքի վրա և այն փոխել իր ցանկացած ուղղությամբ: Արևմտյան տերությունների հետամտած իսկական նպատակների մերկացման խտացումն է երգիծաբան հրապարակախոսի հետևյալ քառատողը.

Երբ ամերիկյան մեծ դեսպանն ու կին

<sup>22</sup> Տե՛ս Ա շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին. Երևան, 1955, էջ 567-569:

<sup>23</sup> «Թատրոն», Կ. Պոլիս, 1976, 4 դեկտեմբերի:

Մեր դպրոցներուն այցելու եկին,  
 Ըսե անոր պես, թե ապրի կատուն,  
 Որ իր փոքրին համար մուկ է բռնում:

Հ. Պարոնյանը արևմտահայ այն մտածողներից էր, որ ի սկզբանե մերժողական դիրք գրավեց օսմանյան 1876 թ. միդիատյան սահմանադրության գործունեության նկատմամբ: Ըստ Պարոնյանի, այդ սահմանադրությունը դիվանագիտական մի քայլ էր, որով թուրք կառավարողները հետամուտ էին խաբելու ենթակա ժողովուրդներին և եվրոպական դիվանագիտությանը՝ հավերժացնելու ռազմաավատատիրական բռնատիրությունը բարենորոգչական զգեստով: Նա բացահայտում էր սուլթանական քարոզչության այն կեղծապատիր լուրերը, թե իբր Թուրքիան, սահմանադրություն ընդունելով, իր առաջադիմությամբ գերազանցել է Ռուսաստանին: «Հեռագրի մը խոսքին նայելով, – ծաղրում էր Պարոնյանը, – Մոսկվայի մեջ ժողովուրդը խլրտիլ սկսած է: Ասդին-անդին թուղթեր փակցուցած են, խնդրելով, որ իրենց ալ օսմանյան սահմանադրության նման սահմանադրություն մը տրվի... Ինչ կըսեք, մեր վիճակը սկսավ նախանձելի ըլլալ, հե՛տ, Ռուսիան պարսպ տեղը մեր վիճակը բարվոքելու կաշխատի»<sup>24</sup>: Պարոնյանը հայտաբերում էր թուրքական լիբերալ շարժման և պահպանողականության կայացրած համաձայնության գաղափարական սնանկությունը, սահմանադրության մեջ տեսնում օսմանյան վերնախավի և «նոր օսմանների» քաղաքական խոհանոցում հունցված կեղծիքը: Իրականում բարենորոգումների համար ո՛չ թուրքական կառավարությունը, ո՛չ էլ տերությունները չունեին ցանկություն և քաղաքական որևէ մարտավարություն: Պարոնյանը դատափետում էր բարենորոգումների նախապես կառուցված փակուղին՝ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների չնչինությունը, կեղծիքի և բռնությունների պահպանվող ու ծավալվող միջավայրը:

Հայկական հարցի ձախողումը Բեռլինի կոնգրեսում Պարոնյանը մի հայտնի չափով բացատրում էր ազգային անմիաբանությամբ, իրարամերժ պատկերացումների և գործողությունների բարդույթով: Հայկական հարցի միջազգայնացումը նա դիտում էր որպես հայ ժողովրդին ազգային ինքնությունից զրկելու և ինքնությանն ընդդիմանալու դրսևորում: Հետագայում Պարոնյանը կտրուկ ժխտում էր Հայկական հարցի ծագման և միջազգայնացման պատահականության վերաբերյալ անհիմն տեսակետները, որպիսին, օրինակ, պաշտպանում էր «Մանգումեի էֆթյարի» («Կարծիքների շարք») թերթը, որ հրապարակվել է Կ. Պոլսում 1896–1917 թթ., մինչև 1896 թ. հայատառ թուրքերեն, այնուհետև՝ հայերեն: «Թող «Մանգումե» այդպես հավատա, – գրում է Պարոնյանը, – թե Հայկական խնդիրն ինքն իրմե մտավ եվրոպական լրագիրներու և Անգղիո խորհրդարանին մեջ: Իսկ եթե իրմե գատ ուրիշ հավատացող մը գտնե՛ թող բարեհաճի գայն ցույց տալ մեզ»<sup>25</sup>:

<sup>24</sup> Նույն տեղում, 1876, 25 դեկտեմբերի:

<sup>25</sup> «Արձագանք», 1883, - 37, էջ 525:

Պարոնյանը Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրմանը հավատում էր և այն տեսնում կայսրության փլուզման մեջ, իսկ քանի դեռ չի եկել այդ բաղձալի պահը՝ հայ ժողովուրդը պետք է կարողանա ընդդիմանալ բռնություններին և ապավինել ինքնապաշտպանության միջոցներին:

Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ տարբեր առիթներով իր վերաբերմունքն է հայտնել Գ. Սրվանձտյանը: Նա միշտ էլ թերահավատորեն և քննադատորեն է վերաբերվել Հայկական հարցի լուծման ուղղությամբ եվրոպական տերությունների տված հայտարարություններին ու խոստումներին: Սրվանձտյանը մերժում էր արևմտակարգական կողմնորոշման պաշտպանության գաղափարը, որովհետև «Հայաստանի մեջ է բուն Հայկական խնդիրը և մենք Պետլինի մեջ կորոնենք զայն»<sup>26</sup>: Ազգի հավաքական միասնության և միասնաբար գործելու մեջ է հաղթանակի գրավականը, իսկ եթե մենք թույլ տանք, որ «մի այլ ցեղ եվրոպական ազգերի հաջողի մուտ գտնել, ոտն ածել այն տեղերը, ոչ ևս կյանք կմնա մեզ որպես ժողովրդյան մը: Եվ ո՞ր պիտի ապրինք, ամենայն ինչ կորած է հայնժամ մեզ համար, և մենք կորած ամեն բանի համար»<sup>27</sup>:

Ո՞րն է էլքը: Այն բանի ազգովի գիտակցումը, որ «այդ կեղծ բարերարները ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ և մսագործներ, որ զմեզ... պատրաստ ոչխարներու և պարարակ կովերու տեղ դնելով, մեր փարախեն կուզեին խրտնեցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել»<sup>28</sup>: Ոչ մի հույս չտաճելով եվրոպական տերությունների և Ռուսաստանի առաքելության նկատմամբ, Հայկական հարցի լուծումը Սրվանձտյանը կապում էր միայն ու միայն ժողովրդի համախմբման և ինքնապահպանության հետ<sup>29</sup>:

Այսպիսով, դյուրին է նկատել, որ 1880-ական թվականների արևմտահայ ժողովրդանվեր մտավորականության իրատեսական թևի կարծիքն այն էր, որ հարկավոր է չհրապուրվել եվրոպական դիվանագիտությամբ, քանզի Եվրոպան ավելի շատ մտահոգված է Թուրքիան իր օգտին շահագործելու գերագույն հոգսով: Այդ թևի տեսակետը հանգում էր արևմտահայության ազատագրման գաղափարին՝ մեծ տերությունների շահադիտական միջամտությունների բացասմամբ: Հայկական հարցի հետ կապված իրադարձությունները 1880–1890-ական թվականներին կործանեցին այն բոլոր ռոմանտիկական ամրոցները, որոնք կառուցվել էին ռուսահայ լիբերալ ու դեմոկրատ գործիչների մի ստվար մասի պատրանքաշատ ծրագրերում: Աստիճանաբար ուղի էր որոնում զգաստ հայացքը կյանքի և անցյալի քաղաքական իրադարձությունների նկատմամբ: Այն հիասթափությունը, որ ապրեց մի ամբողջ ժողովուրդ մեծ տերությունների համակերպական գործարքից հետո և ցարիզմի հայահալած քաղաքականության հետևանքով, չէր կարող չանդրադառնալ նրա հոգեբանության և ազգային-քաղաքական նկարագրի, նրա գործիչների գործելակերպի վրա: Ազգային-ազատագ-

<sup>26</sup> Գ. Սրվանձտյան և Գ. Թորոս աղբար, հ. 1. Կ. Պոլիս, 1879, էջ 270:

<sup>27</sup> Նույն տեղում, հ. 2, 1884, էջ ԺԳ:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ ԺԷ:

<sup>29</sup> Տե՛ս է. Կոստանյան և Գ. Գաբրիելյան Սրվանձտյանց. Երևան, 1979, էջ 139:

րական շարժման և ազգապահպանման հետագա գործելակերպի որոշումը հատկապես 1890-ական թվականների կոտորածներից հետո դառնում էր համազգային պատասխանատվության առաջնային խնդիր:

Հայ ժողովրդի ազգային համախմբման, ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի ընթացքի և լուծման հեռանկարների մասին ուրույն վերաբերմունք ուներ եկեղեցական խոհուն գործիչ, հրապարակախոս, պատմաբան և բանասեր Մ. Օրմանյանը:

Կ. Պոլսի 1896–1908 թթ. պատրիարք Մաղաքիա (Պողոս) Օրմանյանը ծնվել է 1841 թ. փետրվարի 11-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում, կաթոլիկ ծնողների ընտանիքում: Նախնական կրթությունը տանը և տեղի դպրոցներում ստանալուց հետո 10-ամյա տարիքում ուղարկվում է Հռոմ՝ ուսումը շարունակելու Անտոնյաց լուսավորչական վանքում: 1858 թ. պատանի Օրմանյանն այստեղ ավարտում է միջնակարգ ուսումնառությունը, հայերենի հետ սովորելով լատիներեն, իտալերեն և ֆրանսերեն լեզուները: Այնուհետև արեղայական օրհնություն է ստանում, մտնում Սուրբ Ապոդիմարի բարձրագույն դպրոցը՝ սեմինարիան, 1860 թ. ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1865 թ. Օրմանյանը ստանում է նաև աստվածաբանության, իսկ 1868 թ.՝ օրենսգիտության դոկտորի գիտական աստիճան: 1863 թ. նա ձեռնադրվում է սարկավազ և ապա քահանա՝ որպես Անտոնյաց միաբանության անդամ: Մ. Օրմանյանի հասարակական առաջին գործունեությունը կապված էր արևմտահայ ազգային մի կարևորագույն խնդրի հետ, որն ինքնին շատ ուշագրավ է: Դա 1868–70-ական թվականներին բորբոքված հասունյան և հակահասունյան վեճն է, որն «այնքան նշանավոր եղավ կաթոլիկ հայոց պատմության համար»<sup>30</sup>: Ո՞վ էր Հասունյանը և ովքե՞ր էին հակահասունյանները, ի՞նչ գործ ունեւր Օրմանյանը այս վեճի մեջ: Մ. Հասունյանը կաթոլիկ եկեղեցական գործիչ էր, որը կրթություն ստանալով Հռոմի քարոզչության դպրոցում և հետագայում եկեղեցական տարբեր պաշտոններ զբաղեցնելով (Անարգաբայի կաթոլիկ համայնքի եպիսկոպոս, Կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարք, կաթոլիկ հայերի կաթողիկոս)՝ իր գործունեությամբ չափազանց բացասական դեր է խաղացել հայոց ազգային միասնության պառակտման խորացման ուղղությամբ: Որպես կաթոլիկ հայերի կաթողիկոս՝ նրա իրավասությանը ենթակա էին Թուրքիայի և Մերձավոր Արևելքի երկրների բոլոր հայ կաթողիկները: Նա կարողացավ եպիսկոպոսական արժոններ հաստատել Կ. Պոլսում, Հալեպում, Մարաշում, Ադանայում և Դիարբեքիքում:

Կաթոլիկ քարոզչության հաջողությունը պայմանավորված էր պատմական այն իրողությամբ, որ ստեղծվել էր XVI դարավերջից, երբ Վատիկանը համառորեն ջանում էր իր գերիշխանությունը հաստատել համաքրիստոնեական եկեղեցու վրա, երբ Թուրքիայի կիսազաղութի վերածվելը պարտատեր եվրոպական տերություններին և Վատիկանին XIX դարի սկզբից նոր հնարավորություններ էին ընձեռում կրոնական քարոզիչների միջոցով իրենց ազդեցությունը տարածել արևմտահայության վրա՝ ջանալով նրանց հեռու պահել դեպի Ռուսաստան

<sup>30</sup> Տե՛ս Գ. Վ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրություն. Թիֆլիս, 1908, էջ 7:

կողմնորոշումից: Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում իրենց առևտրական գործարքները դյուրին դարձնելու, Ռուսաստանի տնտեսական, առավել ևս քաղաքական ազդեցությունը թուլացնելու նպատակով Իտալիան և Ֆրանսիան կաթոլիկ քարոզիչների բազմամարդ խմբեր էին շարժում դեպի Կ. Պոլիս, ապա՝ Արևմտյան Հայաստան, իբր «քաղաքակրթություն տարածելու» նպատակով, սակայն իրականում քրիստոնեական եկեղեցու շահերը պաշտպանելու կեղծ պատրվակով դավանափոխում էին հազարավոր հայերի և ջանում վերջիններիս ծառայեցնել Արևմուտքի նվաճողական դիտավորություններին: Առաջինը Ֆրանսիան սկսեց կաթոլիկ քարոզիչներ առաքել Կ. Պոլիս և, հայերից շատերին դավանափոխելով, մահմեդականներից և հրեաներից հազարավոր գործակալներ պատրաստելով՝ ջանք չխնայեց իր նվաճողական քաղաքականության համար հող ստեղծելուն: XIX դ. առաջին քառորդին հայ կաթոլիկների համայնքը Կ. Պոլսում ուներ 25 հազար անդամ և եվրոպացիների հարկադրանքի տակ վարում էր հակահայկական քաղաքականություն, նույնիսկ հակադրվում հայ առաքելական եկեղեցու ավանդույթներին, Հռոմի կղերապետության սաղրանքներով դավանաբանական վեճեր մղում էջմիածնի կաթողիկոսության և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դեմ:

Սուլթանական կառավարությանը ձեռնտու էր արևմտահայության պառակտումը, ուստի, մերթ պաշտպանելով համայնքներից մեկին, մերթ՝ մյուսին, նպաստավոր անհրաժեշտության դեպքում վնասում էր երկուսին միաժամանակ: 1828 թ. հունվարին Մահմուդ 2-րդը, կաթոլիկ-լուսավորչական պայքարն առիթ բռնելով, 12 հազար հայ կաթոլիկների, այդ թվում 42 հոգևորականների արքայություն է Կ. Պոլսից, Բերայից, Ղալաթիայից: Կողոպտված հայ գերդաստանները ցրտաշունչ ձմռանը քշվում են Փոքր Ասիայի խորքերը: Որոշ ժամանակ անց, Ֆրանսիայի միջամտությամբ, սուլթանը նորից արտոնում է կաթոլիկ հայերի վերադարձը մայրաքաղաք, որը և խթանում է կաթոլիկացման գործընթացը: 1840-ական թվականներին հայ կաթոլիկների թիվը հասնում է արդեն 35 հազարի, որոնք ունեին բազում դպրոցներ և հիվանդանոց: Եպիսկոպոս Ա. Հասունյանը միջոցների մեջ խտրություն չդնելով՝ համալրում է «իր համայնքը»: Մինչ այդ կաթոլիկների առաջնորդ Գևորգ 8-րդը նստում էր Ջմառի վանքում, իսկ նրա մահից հետո Թուրքիայում ստեղծվեց կաթոլիկների պատրիարքություն և տեղափոխվեց Կ. Պոլիս՝ իրեն ենթարկելով Ասորիքի, Միջագետքի, Փոքր Հայքի, Եգիպտոսի 40 հազար հայ կաթոլիկներին: Հասունյանը Հռոմից ստացավ կաթոլիկների կաթողիկոս-պատրիարք՝ «պատրիարք տանն Կիլիկիո» տիտղոսը և 1856 թ. Թուրքիայի հայ կաթոլիկների թիվը հասցրեց շուրջ հարյուր հազարի:

1850-ական թվականների սկզբին Կ. Պոլսում ձևավորվեց «Հասունյան կուսակցությունը»: Հասունյանները բացում էին արական և իգական վարժարաններ, անվճար հագուստ և սննդամթերք տալիս հայ աղքատ երեխաներին, կաթոլիկացնում նրանց և ուղարկում Արևմտահայաստանի տարբեր գավառներ:

Կարիքը, թշվառությունն ու քաղցը հայ ծնողներին ստիպում էին այդ ճանապարհով կորցնել իրենց զավակներին: Կաթոլիկների վարքագիծը, սուլթանի դրածո դառնալը, հոգեորսությամբ Ֆրանսիայից և Վատիկանից միջոցներ ստա-

նալը, գայրույթ առաջ բերեց Կ. Պոլսի հայ առաջավոր մտավորականների մեջ, և ի հակադրություն հասունյանների, կազմակերպվեց «Հակահասունյան կուսակցությունը»: Հասունյանների դեմ պայքար սկսեցին Կ. Փանոսյանը, Հ. Մվաճյանը, Ա. Հայկունին և ուրիշներ:

Հասունյան-հակահասունյան պայքարին ամենագործուն մասնակցություն ունեցավ նաև Մ. Օրմանյանը: Որպես խորհրդական աստվածաբան և Անտոնյան միաբանության քարտուղար, վարդապետ Մ. Օրմանյանը 1860-ական թվականների վերջերին մասնակցում էր այն բոլոր հանձնաժողովներին, ուր քննարկվում էին հասունյան-հակահասունյան վեճերը: Անտոնյանները, որոնք Մխիթարյանների հետ, հասունյան վեճերի ժամանակ, ազգային ուղղության պաշտպաններ էին, ճնշվում էին Հռոմից այն բանի համար, որ ցանկանում էին պահպանել իրենց ազգային առանձնահատկությունները՝ եկեղեցու հին ծեսերը, ժամասացությունը և լեզուն, եկեղեցական կալվածքները, դպրոցները, մյուս հիմնարկությունները, հասարակական և եկեղեցական անկախությունը: 1876 թ. Մ. Օրմանյանն ընդդեմ պապի կոնդակի, որի նպատակն էր հայ կաթոլիկ եկեղեցուն զրկել բոլոր կարգի ինքնուրույնություններից, հրատարակեց երկու գիրք, որոնցում Հասունյանի և նրա կուսակիցների դեմ պայքարի նետված հեղինակը ոչ միայն պաշտպանում է արևելյան կաթոլիկ եկեղեցիների անկախության սկզբունքն ընդդեմ պապի ենթարկեցնող «ամենագործ» կոնդակի, այլև բացահայտում նման կուսակցության և կոնդակի լույս աշխարհ գալու սոցիալ-իմացաբանական դրդապատճառներն ու հիմքերը: Օրմանյանի աշխատությունների գիտապատմական արժեքը բարձր է գնահատել Ա. Չոպանյանը<sup>31</sup>:

Մ. Օրմանյանը 1876 թ. Հռոմից վերադառնում է Կ. Պոլիս՝ եռանդուն կերպով շարունակելով պայքարը հասունյանների դեմ, արդ արդեն որպես Անտոնյան միաբանության ամենաճանաչված գործիչ: Օրմանյանը 1875 թ. հանդիպել էր Ջ. Գարիբալդիին, նրա հետ քննարկել հայ և իտալացի ժողովուրդների ազատագրական պայքարին վերաբերող հարցեր: Որոշելով իրեն նվիրել հայ եկեղեցուն, ժողովրդի լուսավորության գործին, նա 1877 թ. Կ. Պոլսում հրաժարվում է կաթոլիկությունից, իսկ 1879 թ. օծվում Հայ առաքելական եկեղեցու ծայրագույն վարդապետ: Դրանից հետո նշանակվում է Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցու քարոզիչ և աշխատում յոթ տարի: Արևմտահայերի մեջ նա միակ առաջնորդն էր, որ իր ձայնը բարձրացրեց արևելահայ դպրոցների փակման ցարական միջոցառումների դեմ, գտնելով, որ արևելահայ եղբայրներին պետք է վշտակից լինեն նաև արևմտահայերը, քանզի չնայած արևելահայը նյութապես առավել բարվոք վիճակում է, այդուհանդերձ «Եկեղեցի-դպրոց դարավոր իրավունքների» պաշտպանության համար զգում են արևմտահայ իրենց համազգայինների կարիքը:

Մ. Օրմանյանը պատրիարք Ն. Վարժապետյանին օգնել էր Հայկական հարցի արձարձման գործում, կազմել եվրոպական պետությունների դեսպանատների, արտաքին գործերի նախարարությունների ղեկավարներին ուղղված գրություններ, կատարել խորհրդատուի, բանագնացի պարտականություններ: Բարձր Հայքի հոգևոր առաջնորդ եղած տարիներին կապ է հաստատել «Պաշտպան հայ-

<sup>31</sup> Տե՛ս Ա. Չոպանյանի մ. Սկրտիչ Պեշկիթաշյանի կյանքն ու գործը. Փարիզ, 1907, էջ 195:

րենյաց» ազատագրական կազմակերպության ղեկավարների հետ: Պատահական չէ, որ Կարինում Մ. Օրմանյանի ազգանպաստ գործունեությունը կասկած է հարուցում կառավարական շրջաններում, և եռանդուն առաջնորդն ստիպված է լինում ընդհատել իր գործունեությունը և փոխադրվել Կ. Պոլիս: 1886 թ. Մ. Օրմանյանը ձեռնադրվում է եպիսկոպոս, որից հետո նրա կյանքում սկսվում է գործունեության մի նոր շրջան: Մակար կաթողիկոսի կողմից 1887–1888 ուստարում հրավիրվում է Էջմիածնի ճեմարան՝ դասավանդելու աստվածաբանական առարկաներ: Մակայն դա, տարաբախտաբար, շատ կարճ է տևում, քանի որ ցարական իշխանությունները ճեմարանի ղեկավարությանը ստիպում են, որպես օտարահպատակի, նրան ազատել աշխատանքից: Մ. Օրմանյանն իր ուսուցչական գործունեությունն էլ ավելի մեծ եռանդով շարունակեց Արմաշում, ուր 1889 թ. սկսեց և յոթ տարի աշխատեց որպես վանքի վանահայր ու իր կազմակերպած դպրեվանքի տեսուչ:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Կ. Պոլսի պատրիարք ընտրվեց 1896 թ. նոյեմբերի 6-ին, Ազգային ժողովի երկրորդ նիստում: Դա 1890-ական թվականների ընդհանուր կոտորածների վարընթացի ամիսն էր. Արևմտյան Հայաստանի արյան լճակները տակավին չէին չորացել: Երկրի բարենորոգումների պահանջների և բարենորոգումների 1895 թ. մայիսյան ծրագրի պաշտոնական հայտարարությանը հաջորդել էին հայկական ջարդերը, որոնք խլեցին 300 հազար կյանք: Այդ ժամանակ Մ. Իզմիրլյանն էր Կ. Պոլսի հայոց պատրիարքը, որը, բողոքի և պահանջի մեջ չթերանալով, «երկաթե պատրիարքի» հռչակ էր ստացել: Բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ արևմտյան տերությունների հակամարտ շահերը չկարողացան իրենց անգամ առերևույթ համաձայնության եզրը պահել, և մայիսյան ծրագրի դիվանագիտությունը հարյուր հազարների արյան ծովի մեջ թաղեց ամեն մի բարենորոգություն:

Մ. Օրմանյանը ցույց տվեց, որ ինքը ո՛չ համիդյան քաղաքականության իրագործողն է և ո՛չ էլ նրա մտայնության համախոհը: Տեղապահի երեքամսյա պաշտոնավարությունից և Մ. Իզմիրլյանի Երուսաղեմ աքսորվելուց հետո պատրիարք ընտրված Մ. Օրմանյանն ազգի համար կատարեց այն, ինչ հնարավոր էր կատարել համիդյան վարչակարգի պայմաններում: Մինչդեռ նրա հակառակորդները միջոցների մեջ խտրություն չէին դնում հասարակական կարծիքը հակաօրմանյանական դարձնելու համար, փորձելով ապացուցել, որ «Օրմանյան շահագործեց համակերպության քաղաքականությունը, Օրմանյան չարաշահեց իր անձնական դիրքը հոգուտ իրեն ընտանիքին, ազգականներուն ու պաշտպանյալներուն: Օրմանյան ոչ միայն համակերպած՝ այլև գործակից է գտնված Համիտեան բեժիմին: Օրմանյան լրտեսության բոյն է դարձուցած Պատրիարքարանը...»<sup>32</sup>: «...Օրմանյան կրնա եղած ըլլալ լավ վանահայր, կրնա կրոնական հմտալից գլուխ մը ունենալ, կրնա դեզ-դեզ «կրոնապատում» և «ազգապատում» հատորներ հրատարակել. ասոնց ամենքը կրնանա լավ ըլլալ, բայց այդ բոլորը չեն կրնար արդարացնել պատրիարք Օրմանյանը իր հանրային գործունեության

<sup>32</sup> Օրմանյան հանրային խղճին և դատարանին առջև, Կ. Պոլիս, 1913, էջ 8:

մեջ»<sup>33</sup>: Մինչդեռ գիտական պատմականության սկզբունքային դիրքերից և համազգային շահերից Օրմանյան պատրիարքի գործունեությունն այսօր մեզ ներկայանում է մի ընթացք, որն Արդուլ Համիդ 2-րդի արյունոտ բռնապետության պայմաններում այլընտրանք չուներ: Մ. Օրմանյանի զգույշ, չափավոր, պահպանողական քաղաքականությունը հարուցել է արևմտահայ ամբոխավարական հատվածի, քաղաքական կուսակցությունների, հատկապես ՀՀԴ, առաջնորդների դժգոհությունը: Ինչ կարող էր անել Օրմանյանը. չէ՞ որ նա տեսել ու տեսնում էր, որ կանոնավոր գործը և թուրքական խուժանը, բարբարոս քուրդն ու չերքեզը միացած՝ գրոհ էին տալիս հայ անգեն ու անպաշտպան ժողովրդի վրա, կոտորում, այրում, հափշտակում, պղծում, ամբողջ գյուղերով բռնի մահմեդականացնում: Այն «հեղափոխական» տարրերը, որոնք պատրիարքական աթոռը 1908 թ. թողնելուց հետո քննադատում էին Օրմանյանին խաղաղ գործունեության և սուլթանի հետ հաշտ ապրելու համար, անտեսում էին երիտասարդ թուրքերի հետ իրենց համագործակցության տխուր հեռապատկերները, որ առավել ողբերգական էին լինելու, քան «սուլթանի հետ համագործակցությունը»: Օրմանյանը տեսնում էր, որ եվրոպական տերությունները հայ ժողովրդի նկատմամբ սուլթանական կառավարության գործադրած չարագործությունների կողքով անցնում էին շատ անտարբեր: «Ազգին ամենեն փոթորկալի վիճակին մեջ զիս պատրիարք կարգեցին, – ասել է Օրմանյանը «Արևելք» պարբերականի աշխատակից Ե. Երուխանի (Սրմաքեշխանյան) հետ հարցազրույցի ժամանակ 1907 թ.: – ...Փոթորկի ատեն նավապետ մը ո՛չ հովերը կրնա կեցնել, ո՛չ ալիքներու կատաղությունը հանդարտեցնել, իր ջանքը կը՛լլա այդ վտանգեն նավը անցնել և նավահանգիստ հասցնել. հա՛, երբեմն կ'պատահի որ մեկ կայս մը կը կոտորի կամ առագաստ մը կը պատռի, բայց աստոնք հոգ չեն, եթե նավուն ամբողջությունը չի վնասվիր: Ես այս տեսակ նավու մը նավապետն էի. բոլոր ջանքս թափեցի, որ նավը ողջամբ նավահանգիստ հասցնեմ. ու ասիկա ըրի, այն մասին խիղճս հանդարտ է»<sup>34</sup>:

Օրմանյանը խոհուն ու շրջահայաց էր հատկապես իրօրյա կացությունը գնահատելիս: Կոտորածներից հետո էլ շարունակվող հայոց պատմության 1896–1908 թթ. դժնդակ տարիներին, երբ Թուրքիայում շարունակվում էր խաթարված մնալ հայերի ոչ միայն հանգիստը, այլև ֆիզիկական գոյությունը: «Ինձի կմնար, – գրում էր Օրմանյանը հետագայում, – հարմար կերպերով, ճարտար դարձվածքներով, հնարավոր միջոցներով Համիտի հայերու դեմ ունեցած ատելությունը մեղմացնել, ազգային կացությունը բարվոքել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիտին ուզածը չէր և երբ էս անոր կհետնեի, Համիտին հետևող եղած չէի ըլլար...»<sup>35</sup>: Այնուհետև՝ «Արքունաց հետ մտերմական հարաբերություններ պահելիս, – շարունակում է նա, – և ամեն գործի համար Երլտրզ դիմելիս հայտնի իրո-

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>34</sup> Գ ա ռ է գ ի ն վ. Հ ո վ ս ե փ ե ա ն. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրություն. Թիֆլիս, 1908, էջ 50–51:

<sup>35</sup> Մ. Օ Ր մ ա ն յ ա ն. Խոհք և խոսք. Երուսաղեմ, 1929, էջ 28–29:



դություն մըն է, և հետևանք Համիտի բռնած քաղաքականության, որ նախարարությունները չեզոքացնելով՝ ամենայն ինչ պալատան մեջ ամփոփած էր, ուր գանազան ճյուղերու համար հատուկ հանձնարարություններ որոշած էին իբրև անպաշտոն նախարարություններ, և հայերու վերաբերյալ գործերը առաջին քարտուղար Թահսին բաշայի հանձնված էին, և ես ալ ստիպեալ էի անպատճառ անոր դիմել և անոր հետ բանակցել»<sup>36</sup>:

Մ. Օրմանյանի համար ամենակարևորը հայ ժողովրդի ինքնապահպանումն էր, որի համար պետք է աշխատեին բոլորը՝ հասարակ բեռնակրից մինչև «վեհ պատրիարքն ու կաթողիկոսը»: Նա հիմնականում իր աշխատությունները գրեց պատրիարքական աթոռը թողնելուց հետո, երիտթուրքերի սանձարձակ տիրապետության ժամանակաշրջանում: Իր բոլոր աշխատություններում Օրմանյանը գերծ մնաց անցյալի ազգային-քաղաքական իրողություններին, դարասկզբի հետադեմ պահպանողականներին (Եղիշե քահանա Գեղամյանին և մյուսներին) բնորոշ, հախուռն գնահատականներ տալուց: Նա որպէս պատմաբան, հետևողական փաստագրող ու վերլուծող էր, ուներ երևույթներն ու անցքերը դիտելու և քննելու տրամաբանական մեթոդ ու անաչառ եղանակ: Օրմանյանը չունէր նաև կուսակցական նախապաշարումներ և նեղմտություն: Նա պատմական երևույթները դիտարկում էր պատմական հանգամանքների մեջ՝ տեղի և ժամանակի պայմաններին համապատասխան: Քննադատելով ռուսական ցարիզմի ազգային-կրոնական քաղաքականությունը, նա երբեք այդ «քննադատության» անվան տակ չէր ժխտում արևելահայերի կյանքում Ռուսաստանի առաջադիմական դերը: Անդրադառնալով այն հարցին, որ դեպի Անդրկովկաս ցարական գործերի առաջխաղացման, XIX դարի 20-ական թվականների համազգային ներշնչանքի այդ պահին՝ «Նիկողայոս Ա կայսրը յուր խոստումները առանձնապէս ընդարձակեց, մինչև իսկ հայերուն աչքին ինքնուրույն իշխանության ակնկալությունները փալփիլեցուց, և այդ խոստումները երաշխավորելու դիտմամբ, պահ մը Հայկական նահանգ անուն ալ տուալ նոր տիրապետած գավառներուն», Օրմանյանը օբյեկտիվորեն շարունակում էր, որ «այդ ամենը քաղաքագիտական ճարտարություններ եղան և տիրապետությունը դյուրացնելու առաջնորդեցին: Երբ որ տիրապետությունը լրացավ և հաստատուն ձև առավ, ռուսական կառավարությունը մինչև իսկ հայոց կրոնական կամ հոգևորական գործերուն վրա ալ ազդեցություն ունենալու ձեռք գարկավ»<sup>37</sup>: Քննադատելով ցարական իշխանությունների ուխտադրժությունը, Օրմանյանը ռուսական տիրապետությունը իր ողջ էությանը համարում էր ընդունելի: Արժեքավորելով Հայաստանի արևելյան հատվածի Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու իրողությունը և արտահայտելով իր մոտեցումը Ռուսաստանին և պարսկահայ ներգաղթին, Օրմանյանը գրել է. «Հայերը ավելի կրած հարստահարություններեն կփախչեին, և ապագա բարօրություն կփնտրեին և այդ մասին հուսախաբ չեն եղած, քանզի պաշտոնական վիճակագրություններն ալ, միայն Երևանի և Նախիջևանի մեջ 60 տարիների ընթացքին եռապատիկ անցած կցուցանեն տեղի հայաբնակությա-

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 259-260:

<sup>37</sup> Մ. Օրմանյան. Հայ եկեղեցին և իր պատմությունը. Կ. Պոլիս, 1911, էջ 119:

նր»<sup>38</sup>: Քիչ չեն պատահել դեպքեր, երբ ռուսական տիրապետության ներքո սաստկացել են հայության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները, փակվել մշակութային հաստատություններն ու դպրոցները, բռնագրավվել եկեղեցական գույքը, բայց, այնուամենայնիվ, Օրմանյանը գոհ էր ռուսական տիրապետությունից, որովհետև այն համատարած մեռելություն չէր սփռում և երբեք «երեք հարյուր հազարներու խողխողում», «մոլեռանդ խուժանի մը ձեռքով խաղաղ ապրող տարրին վրա հարձակում և ջարդ», «երեսուն հազար անմեղ կյանքերու անողորմ կոտորած չէր» սփռում<sup>39</sup>:

Ռուս-մահմեդական զինաբախումների ժամանակ հայ գործիչները կուրորեն չեն օգնել և աջակցել ռուսներին, նրանք գործել են համազգային շահի և ժամանակի թելադրած պահանջների ոգուն համապատասխան: Օրմանյանը խիստ վնասաբեր էր համարում ազատագրական շարժման ընթացքում ամեն տեսակ քաղաքական արկածախնդրություն: Այդ տեսակետից նա իր և Ներսես Աշտարակեցու գործելակերպի նմանությունը նկատի ուներ, երբ գրում էր, թե Ներսեսը որքան «բուռն ու հախուռն» էր գործնական ձեռնարկներում, «նույնչափ էլ հանդարտ ու խոհական պարագաները կշռելու և հանգամանքներին հարմարվելու մեջ»<sup>40</sup>:

Հայկական հարցի ծագման, նրա ամբողջ ընթացքի, անցած յուրաքանչյուր շրջափուլի դառնադեպ դասերի վերաբերյալ մշտամնա արժեք ունեն Մ. Օրմանյանի գնահատականները: Նրա ձևակերպումներում չկան պատմական դեպքերի անհարկի մանրամասն նկարագրություններ և «հայասեր» դեմքերի ներբողներ, ինչպես հաճախ կատարել են իր ժամանակակիցներից ոմանք:

Հարցի էությունն ընթերցողին մատչելի դարձնելու համար շատ ավելի կարևոր են և այսօր առավել ուշագրավ մեծ տերությունների հակասությունները Թուրքիայի կողմից իր օգտին ծառայեցնելու Օրմանյանի գիտական ու պատմաքաղաքական շեշտադրումները: Փաստերի խորիմացությամբ և մտքերի կուռ դաշինքի տրամաբանությամբ ահա ինչպիսի ճշմարտապատումի է հանգում Օրմանյանը: «Հայկական կոչված խնդիրը, – գրել է նա, – ծանոթ է և նոր բացատրությանց չի կարոտիր, միայն պետք է նկատի առնել անոր հետզհետե առած ձևերը և կրած տարբերությունները: Ներսես պատրիարքի սկսած ձեռնարկը կրնանք անոր երկրորդ կերպարանը սեպել, առաջինը համարելով Խրիմյան պատրիարքի օրով սկսած հարստահարության խնդիրը, օսմանյան կառավարության ձեռքով ներքին գավառներու հայաբնակությանց վիճակը բարվոքելու համար: Նույն փորձը Ներսեսի առաջին տարիներու մեջ ալ կրկնված էր, և արդյունք ունեցած չէր: Այս առաջին կերպարանին հաջորդեց երկրորդը, այսինքն է ռուսությունը պատերազմեն և անոր հետևող խաղաղության դաշնագիրներեն օգուտ քաղելով, օսմանյան կառավարությունը պարտավորվել և ստիպել, եվրոպական տերությանց միջամտությամբ, որպեսզի ցանկացած և խոստացված բարվոքումը իրականանա: Այս եղավ բուն Հայկական խնդրին նպատակը, և Սան-Ստեֆանոյի 16-

<sup>38</sup> Մ. Օրմանյան. Ազգապատում. մասն երրորդ. Երուսաղեմ, 1927, էջ 3581:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 5426:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 3779:

րդ և Բեռլինի 61-րդ հողվածների իսկական իմաստը: Անոնց մեջ ոչինչ չկար, որ օսմանյան կառավարությանը վիրավորեր, և ինքն ալ հոժարակամ ստորագրած էր այդ հողվածները: Երբոր գործադրությունը կհասպաղեր և հարստահարիչ ցեղին կներվեր զինված մնալ, և հարստահարյալ ցեղին զինվելը խստությամբ կարգելվեր, իրողությանց բնական ընթացքով հարստահարյալները հորդորվեցան գաղտնապես զինվելու, զինյալ հարստահարիչներուն ընդդիմանալու և անձնապաշտպանության իրավունքը գործադրելու դիտմամբ, առանց որևէ կառավարության դեմ անջատողական գաղափարի հետևելու մտայնության, ինչ որ կեղծ կամ թյուր մեկնություններ ուզեցին հայերու վերագրել: Այս կերպարանը կրնանք երրորդ համարել Հայկական խնդրին առած ձևերուն մեջ, և ինչպես հայերին կերնի, ոչ մի պարոնի միտք կամ ձեռնարկ հնար է անոր վերագրել, զի կառավարությունն իսկ չի կրնար հանձն առնել, որ հարստահարիչը զինվելու և հարստահարյալը զինաթափ ընելու կամեցողություն կամ բաղտացողություն վերագրի իրեն»<sup>41</sup>:

Այսպիսով, Օրմանյանի գնահատականը միանգամայն բխում էր Արևելյան հարցի շուրջ մեծ տերությունների շահադիտական փոխհարաբերությունների այն կացությունից, որ ստեղծվել էր Բեռլինի կոնգրեսից հետո և որը սրամաքանորեն Հայկական հարցը պետք է տաներ դեպի փակուղի:

Կենսափորձով հարուստ Մ. Օրմանյանը, մահից մի քանի ամիս առաջ, 1918 թ. մայիսին իմաստունության ծերունական բարձրակետից արժեքավորում էր Հայկական հարցի արծարծման ողջ գործընթացում եվրոպական դիվանագիտության անբարոյականությունը: «Քաղաքագիտությունն ալ, դիվանագիտությունն ալ, – գրում էր նա, – ո՛չ սիրտ ունին և ո՛չ խիղճ. գութ անոնց բառարանին մեջ չկա. իրավունք ըսածին ալ շահն ու օգուտն է. քաղաքագիտության և դիվանագիտության ձեռնածուներ՝ եվրոպական մեծ տերություններ. և ներկա առիթին մեջ Անգղիա և Գաղիա ոչ կապ մը ունին Հայաստանի կողմերը, և ոչ շահ մը կը հուսան անոր կացությունեն: Ռուսիա կրնար շահ մը ունենալ, բայց այն ալ քայքայվեցավ և եթե չքայքայվեր, միայն իրեն ավարաբաժինը ընդարձակել կխորհեր, և ոչ թե ուրիշը երջանկացնել: Չեմ ուրանար, թե Կովկասահայր բավական լավ կյանք մը ունեն ռուսական կառավարության ներքև, սակայն այն կանոնավոր և զարգացման հետամուտ տերության մը ընթացքին հետևանքն էր, անկախաբար այս կամ այն տարրին օգտակար ըլլալու դիտումեն»<sup>42</sup>:

Հայկական հարցի միջազգայնացման 40-ամյա ընթացքը Օրմանյանին բերել էր այն համոզման, որ եվրոպական տերությունների համար, որոնք «ո՛չ սիրտ ունին և ո՛չ խիղճ», գլխավորը «շահն ու օգուտն էր»: Առաջնորդվելով սեփական շահերով և չցանկանալով թույլ տալ մրցակիցների քաղաքական կամ տնտեսական գերազանցություն Օսմանյան կայսրությունում, տերություններից յուրաքանչ-յուրն սկզբում քողարկվում էր կայսրության ամբողջականության պահպանման սկզբունքով: Արդեն քառասուն տարի է, գրում էր Օրմանյանը, ինչ հայ ժողովրդի ծանր վիճակը օգտագործելով իբրև թուրքական կառավարության վրա ճնշում

<sup>41</sup> Մ. Օրմանյան. Խոհք և խոսք, էջ 118–119:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 473:

գործադրելու և նրա գործերին միջամտելու պատրվակ, մեծ տերությունները ոչ միայն չեն նպաստել նրա դրության բարելավմանը, այլ ավելի են վատթարացրել այն: Հայկական հարցի պատմությունն Օրմանյանն ամենից առաջ դիտում էր իբրև դասեր առնելու գործընթաց, որպեսզի այդ գործընթացից հանի իր «լինել է, թե չլինել» հարցի պատասխանը: Իսկ լինելու համար Օրմանյանը խորհուրդ էր տալիս իրատես լինել և ճիշտ «որոնել ու որոշել, թե ով պիտի ըլլա հայուն բարօրություն պատրաստողն ու գործադրողը: Հասարակաց ըմբռնումը յուր հավատքը հաստատած է եվրոպական տերությանց վրա, որոնք Պետլինի դաշնագիրը ստորագրեցին, և գլխավորապես երեքին վրա, Անգղիա և Գաղիա և Ռուսիա, որոնք անգամ մըն ալ գործադրել տալու համար մեջտեղ ելան, և վեց կուսակալությանց դրությունն ու բարեկարգությունը կազմակերպեցին: Արդ Պետլինի դաշնագրեն քառասուն տարիներ անցած են, և 61-րդ հոդվածը մեռյալ տառ մնացած է բովանդակ այս երկարամյա միջոցին մեջ, մինչ ինչ որ ուրիշ հոդվածներով որոշված է, անմիջապես գործադրվեցան: Մի թե այս չափը չի բավեր հետևյալներու, թե ընելու միտք չունին: Գիտեմ նա, որ անոնք Եվրոպիո մեջ գործող կուսակցությունները գրգռեցին իրենց առիթ մը պատրաստել, և երբոր անոնք միամտաբար խորհուրդին հետևեցան՝ հայուն վրա կոտորածներ հասան, և եվրոպական տերություններ անկարեկիբ հանդիսատեսներ եղան: Ո՞վ մեզ կը վստահեցնե թե այս անգամ թելադրուած գրգռությունները և խոստացած պաշտպանությունները առաջիններեն տարբեր են. ո՞չ ապաքեն մէկ նշանակէ ալ շատ բաներ կրնան հետևիլ: Մինչև որ հայտնապես չցուցվի կամ չտեսնվի որ եվրոպական տերություններ Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարվոքելու մեջ իրենց օգուտ մը ունին, ո՞չ խոսքերուն հնար է հավատալ, և ո՞չ խոստումներուն վստահել:

Ահա իմ փորձառական հավատքի առաջին կետը»<sup>43</sup>:

Օրմանյանին մտահոգողը տերությունների հանցավոր քաղաքականությամբ փակուղի մտած Հայկական հարցն էր, եղեռնից հրաշքով փրկված մնացյալ հայության ապագան: Չմոռանանք, որ Թուրքիայի կառավարման դեկը վարող և պատերազմը տակավին շարունակող երիտթուրքերի գործունեության հիմքում ամուր նստած և իրացման գործընթացի մեջ էին թուրքիզմի և պանթուրքիզմի ծրագրերը: Օրմանյանն իրեն հատուկ խորագիտությամբ կարողացավ ընկալել վերջիններիս վտանգը և գալիք սերունդներին ավանդել դրանցից պաշտպանվելու գերխնդիրը: «Կարծողներ կան, – ասված է 1918 թ. մայիսյան նրա պատգամում, – որ հայուն ապագա բարօրության մեկ հավանական գործիչը օսմանցին կամ տաճիկը կրնա ըլլալ, և թե հայուն առջև միակ բաց ճամբան տաճիկին փարիլ ու տաճիկին հուսալն է: Արդ եթե տաճիկը յուր այսօրվան քաղաքական մտայնությամբ պիտի մնա, այդ ենթադրության հավանականությունը կը քիչանա. այժմյան քաղաքականությունը Թուրքիա ըսված տերությունը ամբողջապես թուրքացնելն է, հայն ու քրիստոնյան բնաջինջ ընել կամ աննշանակ գոյության վերածել, որ խոսքի նյութ իսկ չկարենա ըլլալ: Մյուս կողմեն ոչ թուրք իսլամները

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 474- 475

հոգով ու սրտով, լեզվով ու կենցաղով թրքացնել, որպեսզի Թուրքիա միատարր ու միապաշտ էրկիր մը ու տերություն մը դառնա...»<sup>44</sup>:

Մ. Օրմանյանն իր ժողովրդի համար կատարեց այն ամենը, ինչ չափով հնարավոր էր և թելադրում էր ժամանակը: Նրա ազգային-քաղաքական գործունեությունը ելնում էր հայրենի երկրի հնարավորությունների և միջազգային հարաբերությունների իրական վիճակից: Իրարամերժ գաղափարների և ըմբռնումների նկատմամբ խորաթափանց քաղաքագետի նրա միտքը բացառիկ զգայուն էր ժողովրդի ճակատագրին առնչվող քաղաքական ամենատարբեր կացությունները գնահատելիս: Նրա եկեղեցական-ազգային գործունեությունը, հրապարակախոսությունը, պատմական բոլոր ուսումնասիրությունների լեյտմոտիվը մեկն էր՝ որոնել արևմտահայության ապահովության, Հայկական հարցի լուծման բանալին: Լինելով ազգային համերաշխության կողմնակից և հասարակական ներդաշնակության համոզված ջատագով, Օրմանյանը խիստ վնասակար էր համարում արկածախնդրական ըմբոստություն խմորող ամբոխավարական տրամադրությունները և անարգում դրանց ոգեկոչողներին: Նա ոչ միայն ցանկացավ (նրա ցանկությունը պլատոնական սեր չէր), այլև ցանկությունը իրողություն դարձնելու տատասկոտ ճանապարհին ինքնալարումի մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի հայ ազատագրական միտքը լինի առավել զգաստ և խոհուն, պատմական գործընթացների բոլոր պահերին աչքի լույսի պես պահի ազգային միասնությունը և չենթարկվի այդ միասնությունը խաթարող՝ դրսից կամ ներսից եկող կանխամտածված գրգռումներին, որոնք միայն առատ ջուր կլցնեին հայոց համազգային համախմբումը կազմալուծող դարավոր թշնամու ջրադաշին: Ե՛վ որ պես եկեղեցական գործիչ, և՛ որպես հայ հոգևոր մշակույթի պատմության ինքնատիպ, անխոնջ մշակ, Օրմանյանն ապրեց իր ժամանակը չափազանց լրիվ, չափազանց անձնվեր: Նրա գործունեության յուրաքանչյուր շրջափուլն իր մեջ պարունակում է սեփական ժողովրդի կացությունն ըմբռնելու և այդ կացությունից էլք գտնելու համար, պատմական կոնկրետ հանգամանքներում գործադրած ջանքերի խելամիտ և նպատակասլաց դրսևորում:

Օրմանյանը հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության այն գործիչն էր, որի եռանդը, դիվանագիտական խառնվածքը համատեղված էր իր տանջահար ազգի բարօրության նկատմամբ անկեղծ ձգտումով և ազատաբաղձության խորունկ կշռադատվածությամբ: Օրմանյանն իր «Ազգապատում», «Համապատում», «Աթոռ Հայաստանյաց», «Հայոց եկեղեցին և իր պատմությունը», «Խոհք և խոսք» և այլ աշխատություններում փաստաաղբյուրագիտական հսկայական նյութի հմուտ համակարգմամբ և վերլուծաբան գիտնականի տեսահորիզոնի լայնությամբ նոր բարձունքի վրա դրեց հայ պատմագիտական և քաղաքագիտական միտքը: Օրմանյանն անվերապահորեն հրաժարվում էր ազգանպաստ համարել այն բոլոր միտումները, որոնք Բեռլինի կոնգրեսի խոստացած բարենորոգումներից դենը չեն տեսնում Հայկական հարցի լուծման հետ անհամատեղելի՝ Թուրքիայի status quo-ն պաշտպանող եվրոպական տերությունների քաղաքականությանը՝ միշտ հղի ողբերգական հետևանքներով: Հասկապես այս առումով ժամա-

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 476-477:

*նակակից սերնդի խորհող ներկայացուցիչների համար Մ. Օրմանյանի՝ ակնա-  
վոր եկեղեցականի և հասարակական գործչի կյանքն ու գործունեությունը հե-  
տաքրքրական և ուսանելի է շատ կողմերով, ասել է թե՛ ունի արդիական խոր-  
հուրդ, անանց նշանակություն:*

АРМЯНСКИЙ ВОПРОС, ЗАПАДНОАРМЯНСКАЯ ОСВОБОДИТЕЛЬНАЯ МЫСЛЬ И  
МАГАКИЯ ОРМАНЯН

*НОРАЙР САРУХАНЫАН*

Р е з ю м е

Армянский вопрос – результат справедливой борьбы армянского народа за свое существование, национальную консолидацию в пределах своей исторической родины, освобождение от турецкого ига – превратился в объект суждений и размышлений современников. Западноармянская общественно-политическая мысль и историография последней четверти XIX – начала XX вв. выдвигали различные концепции и точки зрения. Трезвую и взвешенную позицию по данному вопросу занимал видный общественно-политический деятель, историк, публицист, патриарх армян Константинополя в 1896-1908 гг. Магакия Орманян. Он был убежден в том, что физическое уничтожение западных армян является составной частью политической программы правительства Османской империи. Орманян обличал европейскую дипломатию, великие державы, которые не только не защитили западных армян от турецких варварств, но и сами прямо или косвенно стали соучастниками совершенных в отношении армян преступлений.

ARMENIAN QUESTION, WEST-ARMENIAN LIBERATION THOUGHT AND MAGHAQIA  
ORMANYAN

*NORAYR SARUKHANYAN*

S u m m a r y

The Armenian question – a result of a just struggle of the Armenians for their existence, for the national consolidation within the borders of their historical homeland, liberation from the Ottoman yoke – became an objective issue for the contemporary thought. The West-Armenian social and political thought and the historiography of the last quarter of the 19th and the beginning of the 20th century raised various points of view on the above-mentioned question. A sensible and considerable position has been taken by the outstanding historian, publicist, social figure, the patriarch of the Armenians of Constantinople (1896-1908) Maghaqia Ormanyan. He was sure that the physical liquidation of Western Armenians was a component part of the political program of the Ottoman Empire. Ormanyan condemned the European diplomacy, great powers, who not only hadn't protected Western Armenians from the Turkish massacres, but directly and indirectly became the accessories of the crimes made against the Armenians.